ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2020 թվականի N 973

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ԹԱՂԱՄԱՍ, ՔՇՀ-4 ԹԻՎ 40/6-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍՈՒՍԱՆՆԱ ԼԵՎՈՆԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Լևոնի Սարուխանյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10032020-06-0057 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-4 թիվ 40/6-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 41.62քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 37.25քմ) ավտոտնակը 70760 (յոթանասուն հազար յոթ հարյուր վաթսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 25.0քմ մակերեսով հողամասը 47850 (քառասունյոթ հազար ութ հարյուր հիսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սուսաննա Լևոնի Սարուխանյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սուսաննա Սարուխանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 04
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2020 թվականի N 974

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գայանե Լյովայի Սարգսյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1741456 վկայականը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով և 32-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 4/2 հասցեում գտնվող խանութը՝ համաձայն ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:
2. Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 4/2 հասցեում գտնվող տարանջատված անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցեներ.
ա) 61.43քմ մակերեսով գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Մյասնիկյան փողոց, թիվ 4/2-1 խանութ (հատակագիծ թիվ 1).
բ) 32.5քմ մակերեսով նկուղի, 27.34քմ մակերեսով 1-ին հարկի և 91.3քմ մակերեսով 2-րդ հարկի (ընդհանուր մակերեսը՝ 151.14քմ) շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Մյասնիկյան փողոց, թիվ 4/2-2 բնակելի տուն (հատակագիծ թիվ 2):
3. 105.0քմ մակերեսով կառուցապատված հողամասը թողնել որպես ընդհանուր օգտագործման հողամաս երկու հասցեների միջև՝ հավասար բաժիններով (105.0:2=52.5քմ):
4. Փոխել Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 4/2 հասցեում գտնվող 0.0105հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:
5. Փոխել սույն որոշման 2-րդ կետի բ) ենթակետով տարանջատված 32.5քմ մակերեսով նկուղի, 27.34քմ մակերեսով 1-ին հարկի և 91.3քմ մակերեսով 2-րդ հարկի (ընդհանուր մակերեսը՝ 151.14քմ) գործառնական նշանակությունը՝ հասարակականից՝ որպես բնակելի գործառնական նշանակությամբ շինություն՝ բնակելի տուն:
6. Շինության գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 04
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 մայիսի 2020 թվականի N 975

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 670 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Արաիկի Մովսիսյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 13 մարտի 2020 թվականի թիվ 670 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 19/03/2020թ. թիվ Կ-19032020-06-0065 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 13 մարտի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Նարեկացու փողոցի 4 շենք 49 բնակարանի գործառնական նշանակությունը փոխելու և փոստային հասցեն հաստատելու մասին» թիվ 670 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Որոշման 1-ին կետում «70.4» թիվը փոխարինել «87.94» թվով:

2. Որոշումից հանել 3-րդ կետը և որոշման 4-րդ կետը կարդալ որպես 3-րդ կետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 05
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 976

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ) 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՂԱՄ ՀՄԱՅԱԿԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գեղամ Հմայակի Նավասարդյանի (ծնված՝ 18.05.1963թ.) դիմումը, 15.04.1988թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 17.05.2019թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1308 (նոտարական ակտի կոդ: 843-20190321-84-3656083) և թիվ 1310 (նոտարական ակտի կոդ: 843-20190321-84-3656223) վկայագրերը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 30.04.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-69/20 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) 1-ին փողոց թիվ 25 հասցեում կառուցված բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1179.80քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1958-1990թ.թ. և դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1179.80քմ: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Գեղամ Հմայակի Նավասարդյանի սեփականության իրավունքը Տավրոս (նախկին Ժդանով) 1-ին փողոց թիվ 25 հասցեում գտնվող օրինական 1179.80քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր քաղաքի Ժդանովի 1-ին փողոց թիվ 25 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տավրոս թաղամաս, 1-ին փողոց, թիվ 25 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 977

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉՈՒԽԱՋՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 62/1 ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 923 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մանուկ Հովհաննեսի Նալբանդյանի դիմումը, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Չուխաջյան փողոց, թիվ 62/1 շենքի հարավային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 24.6քմ արտաքին (ներքին մակերես՝ 22,62քմ) մակերեսով մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 24.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված մետաղական ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Չուխաջյան փողոց, թիվ 62/1 շենքի հարավային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Չուխաջյան փողոց, թիվ 62/1-41 ավտոտնակ:
6. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 28 սեպտեմբերի 2009 թվականի «Մանուկ Նալբանդյանին հողամաս տրամադրելու մասին» թիվ 923 որոշումը՝ 06.10.2009թ. համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին (մրցույթով) թիվ 396 պայմանագիրը համարելով լուծված:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 978

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 122 ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գրիգոր Էդուարդի Հակոբյանի դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց, թիվ 122 շենքի հարավային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 26.1քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 25.11քմ) մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 26.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված մետաղական ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց, թիվ 122 շենքի հարավային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, թիվ 122-96/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 979

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ ԹԱՂ. 5-ՐԴ ՓՈՂ. ԹԻՎ 31 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՇՈՏ ՄԱՄԻԿՈՆԻ ԱՔՈՒԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Մամիկոնի Աքուլյանի (ծնված՝ 24.03.1963թ.) դիմումը, 01.12.1967թ. գույքային թերթը, 23.07.2019թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 2237 (նոտարական ակտի կոդ: 843-20190703-84-3988005) և թիվ 2239 (նոտարական ակտի կոդ: 843-20190703-84-3987987) վկայագրերը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 16.03.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-56/20 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 5-րդ փող. թիվ 31 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1095.0քմ և դրան կից 277.0քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1957-2002թ.թ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1372.0քմ: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ**.

1. Ճանաչել Աշոտ Մամիկոնի Աքուլյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 5-րդ փող. թիվ 31 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1095.0քմ մակերեսով հողամասին կից 277.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Աշոտ Մամիկոնի Աքուլյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 5-րդ փող. թիվ 31 հասցեի 1372.0քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ բացառությամբ 15.05.2001թ.-ից հետո ինքնակամ կառուցված 70.16քմ արտաքին մակերեսով ավտոտնակից:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Հաստատել Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 5-րդ փող. թիվ 31 հասցեում գտնվող գույքի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Խնձորուտ, 5-րդ փողոց, թիվ 31 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 980

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ ԹԱՂ. 5-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 37Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՄՎԵԼ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱԴԱՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Հովհաննեսի Ադամյանի (ծնված՝ 22.01.1957թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 03.06.1993թ. սեփականության վկայագիրը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 5-րդ փողոց թիվ 37ա հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 192.0քմ և կից 118.0քմ և 60.90քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1984-2006թ.թ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 370.90քմ:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Սամվել Հովհաննեսի Ադամյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 5-րդ փողոց թիվ 37ա հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 192.0քմ մակերեսով հողամասին կից 118.0քմ և 60.90քմ մակերեսներով հողամասերի նկատմամբ:
2. Ճանաչել Սամվել Հովհաննեսի Ադամյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 5-րդ փողոց թիվ 37ա հասցեում գտնվող 370.90քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ բացառությամբ 15.05.2001թ.-ից հետո ինքնակամ կառուցված 14.10քմ և 0.20քմ արտաքին մակերեսներով պարիսպներից և 1.65քմ արտաքին մակերեսով զուգարանից:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղ. 5-րդ փողոց թիվ 37ա հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Խնձորուտ, 5-րդ փողոց, թիվ 37/1-1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 981

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 19 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 718 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 19 մարտի 2020 թվականի թիվ 718 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 19 մարտի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Երևանյան խճ. թիվ 18 դպրոցի արևմտյան մասում գտնվող հողամասին փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 718 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1. Որոշման նախաբանը «Ղեկավարվելով» բառից հետո լրացնել «ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով» բառերով:

2. Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1-ին կետով.
1. Փոխել Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 145/2-3/1 հասցեում գտնվող 0,00023հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

3. Որոշման մեջ «Վանաձոր քաղաքի Երևանյան խճ. թիվ 18 դպրոցի արևմտյան մասում գտնվող 0.00023հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Երևանյան խճուղի, թիվ 145/2-3/1 հողամաս:» նախադասությունը կարդալ որպես 2-րդ կետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 982

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ԹԱՂԱՄԱՍ, ՔՇՀ-4 ԹԻՎ 57/3-2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐՉՈՅԻ ՄԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վլադիմիր Դարչոյի Մարդանյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20032020-06-0032 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-4 թիվ 57/3-2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 24.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 23.52քմ) ավտոտնակը 40800 (քառասուն հազար ութ հարյուր) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 24.4քմ մակերեսով հողամասը 46710 (քառասունվեց հազար յոթ հարյուր տասը) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վլադիմիր Դարչոյի Մարդանյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Վլադիմիր Մարդանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 983

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՇՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 14/1-1 ՀԱՍՑԵԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Բոշյան փողոց, թիվ 14/1-1 հասցեի հյուսիսային մասում գտնվող 0.00155հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Բոշյան փողոց, թիվ 14/1-1/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 984

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/1-1/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ԱԻԴԱ ՀԱՅԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աիդա Հայկի Մկրտչյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27032020-06-0021 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով, 35-րդ կետի ա), գ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամաս 1-ին փողոց թիվ 2/1-1/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 28.07քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տան, պարսպի (բնակելի տան ներքին մակերեսը՝ 10.07քմ, պարսպի մակերեսը՝ 6.87քմ) համար 131480 (հարյուր երեսունմեկ հազար չորս հարյուր ութսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 67.3քմ մակերեսով հողամասը 128820 (հարյուր քսանութ հազար ութ հարյուր քսան) դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել Աիդա Հայկի Մկրտչյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Աիդա Հայկի Մկրտչյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակելի տան, պարսպի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 985

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3 ՇԵՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՎ ՌՈՒՍԹԱՎԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3 ՇԵՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՈՒՅՆ ՇԵՆՔԻ ԹԻՎ 1 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԱՐԹՈՒՐ ՆՈՐԻԿԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ԲԱԺԻՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Նորիկի Դարբինյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2223172 վկայականը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծերը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Ռուսթավի փողոցի թիվ 3 շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող 0.29158հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն թիվ 1 հատակագծի:

2. Հաստատել Վանաձոր քաղաքի Ռուսթավի փողոցի թիվ 3 շենքի ընդհանուր բաժնային սեփականության մեջ նույն շենքի թիվ 1 բնակարանի սեփականատեր Արթուր Նորիկի Դարբինյանի բաժին հանդիսացող 0.0141հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն թիվ 2 հատակագծի:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Ռուսթավի փողոց, թիվ 3-1/11 հողամաս:

4. Սույն որոշման 2-րդ կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Ռուսթավի փողոց, թիվ 3 շենք, թիվ 1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
Ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 986

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28 ՓԵՏՐՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 509 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 27.03.2020թ. թիվ Կ-27032020-06-0040 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 28 փետրվարի 2020 թվականի թիվ 509 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 28 փետրվարի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 79 շենքի հյուսիսարևելյան մասում ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, ավտոտնակն օրինականացնելու և փոստային հասցե տրամադրու մասին» թիվ 509 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 5-րդ կետում «79-79/1» թիվը փոխարինել «79-79/12» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 987

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 10/2 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Փոխել Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց, թիվ 10/2 հասցեին կից գտնվող 0,00447հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի խառը կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Նաիրի փողոց, թիվ 10/2-1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 988

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2-1, ԹԻՎ 2-1/1 ԵՎ ԹԻՎ 2-1/2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆԱՀԻՏ ԳԱՌՆԻԿԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Գառնիկի Համբարյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 27.04.2020թ. տրված թիվ 17 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052019-06-0031, թիվ 05122017-06-022 և թիվ 10032020-06-0006 վկայականները, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Միավորել Վանաձոր քաղաքի Ռուսթավի փողոց թիվ 2-1, թիվ 2-1/1 և թիվ 2-1/2 հասցեներում գտնվող Անահիտ Գառնիկի Համբարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.226148հա ընդհանուր մակերեսով հողամասերը և շինությունները՝ համաձայն ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք.Վանաձոր, Ռուսթավի փողոց, թիվ 2-1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 989

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 938 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 16 ապրիլի 2020 թվականի թիվ 938 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 16 ապրիլի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Խնձորուտի 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք թիվ 7 հասցեի բնակելի տան ու հողամասի նկատմամբ Փայլակ Գուրգենի Կռոյանի և Սվետլանա Խաչիկի Խաչատրյանի սեփականության իրավունքը ճանաչելու և փոստային հասցեն հաստատելու մասին» թիվ 938 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 4-րդ կետում «Խնձորուտ» բառից հետո հանել «թաղամաս» բառը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 990

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 59-4/1 ԵՎ 59/4-3 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՄՈ ՎԱՍԻԼԻ ՊԱՊԻՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կամո Վասիլի Պապինյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 23042019-06-0004 և թիվ 26072019-06-0013 վկայականները, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը շինությունների բնութագիրը, 06.12.2019թ. տրված տեղեկանքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Աղայան փողոցի թիվ 59-4/1 և թիվ 59/4-3 հասցեներում գտնվող Կամո Վասիլի Պապինյանին սեփականության իրավունքով պատկանող 0.004832 հա ընդհանուր մակերեսով հողամասերը և 42.29քմ ընդհանուր մակերեսով խանութները՝ համաձայն ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-րդ կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Աղայան փողոց, թիվ 59-4/1 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2020 թվականի N 991

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՆՅՈՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱՄ ՖԻԼԱՅԻ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արամ Ֆիլայի Կոստանյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10032020-06-0025 վկայականը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի բ) ենթակետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Բանյոյի փողոց թիվ 6/11 հասցեում Արամ Ֆիլայի Կոստանյանին սեփականության իրավունքով պատկանող 27.0քմ մակերեսով հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 54.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 49.02քմ, որից 23.94քմ մակերեսը՝ 1-ին հարկ, 25.08քմ մակերեսը՝ 2-րդ հարկ) ավտոտնակը՝ համաձայն հատակագծի:

2. Արամ Ֆիլայի Կոստանյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 54.0քմ արտաքին մակերեսով ավտոտնակի համար 113400 (հարյուր տասներեք հազար չորս հարյուր) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Բանյոյի փողոց, թիվ 6-11/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 06
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մայիսի 2020 թվականի N 992

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 138 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գ ԵՎ Մ» ՍՊԸ-ի տնօրեն Գարիկ Սերգեյի Դանիելյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 12 հոկտեմբերի 2017 թվականի թիվ 138 շինարարության թույլտվությունը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի 12 հոկտեմբերի 2017 թվականի թիվ 138 շինարարության թույլտվության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ «2580.0» թիվը փոխարինել «3110.77» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մայիսի 2020 թվականի N 993

«ՓԱՄԲԱԿԵՑԻ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

«ՓԱՄԲԱԿԵՑԻ ԵՂԲԱՅՐՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հանդիսանալով համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու ծառայություն իրականացնող սուբյեկտ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով և Վանաձոր համայնքի ավագանու 28.11.2019 թվականի թիվ 150-Ն որոշմամբ սահմանված չափով չի կատարել տեղական տուրք վճարելու իր պարտականությունը, ինչի հիման վրա 2020 թվականի ապրիլի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ տեղական տուրքի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից տրված ելակետային տվյալների և Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 20.04.2020 թվականին կազմված զեկուցագրի՝ ք. Վանաձոր, Կ. Դեմիրճյան 1/6 հասցեում «ՓԱՄԲԱԿԵՑԻ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն (տնօրեն՝ Արտակ Գևորգյան) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու ծառայություն իրականացնելու իրավունք է ձեռք բերել, որի իրականացման համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով և Վանաձոր համայնքի ավագանու 28.11.2019 թվականի թիվ 150-Ն որոշմամբ սահմանված է համայնքի բյուջե գանձվող տարեկան տուրք:

2020 թվականի ապրիլի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հիմքով՝ Վանաձորի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի հիման վրա, 2020 թվականի մայիսի 04-ին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չի ներկայացել «ՓԱՄԲԱԿԵՑԻ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի տնօրեն Արտակ Գևորգյանը:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեղական տուրքը նույն օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ տեղական տուրք և (կամ) վճար վճարողներ են համարվում նույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված գործողություններից և 10-րդ հոդվածով նախատեսված համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցվող ծառայություններից օգտվող անձինք:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրք:

Վանաձոր համայնքի ավագանու 28.11.2019 թվականի թիվ 150-Ն որոշման համաձայն՝ համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվել է 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 8-րդ, 9-րդ և 11-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ, հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և Վանաձոր համայնքի ավագանու 28.11.2019 թվականի թիվ 150-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇԵՑԻ.

1. «ՓԱՄԲԱԿԵՑԻ ԵՂԲԱՅՐՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հօգուտ Վանաձոր համայնքի բյուջեի գանձել 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես 2020 թվականին համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքի գումար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. մայիսի 07
ք.Վանաձոր